ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանի՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ և Փարիզ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Քրիստիննե Գրիգորյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ և Փարիզ), 2019 թվականի սեպտեմբերի 24-28-ը:

Հրավիրող կողմը՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողով (ECRI) և Եվրոպայի խորհուրդ:

Գործուղման նպատակը՝ Եվրոպայի խորհրդի պաշտոնյաների հետ աշխատանքային հանդիպումներ ունենալը, ինչպես նաև Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի 25-ամյակի կապակցությամբ կազմակերպված «Իրավահավասարության արդյունավետ ճանապարհը» խորագրով բարձրաստիճան համաժողովին մասնակցելը:

Քննարկված թեմաները՝ Փարիզում կայացած բարձրաստիճան համաժողովի շրջանակներում մասնակիցներին ներկայացվել է 25 տարվա համատեղ ջանքերը՝ խթանելու հավասարության և ռասիզմի դեմ պայքարը: ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ներկայացրել է վերը նշված ոլորտներում ՀՀ կառավարության կողմից իրականացված և հետագա պլանավորված քայլերը:

Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի պաշտոնյաների հետ աշխատանքային հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության Իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրում ամրագրված կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումների ցանկում ամրագրված առաջնահերթություններին, հանրային քննարկման ներկայացված <<Դատական օրենսգիրք>> ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումների կատարելու մասին օրենքի նախագծի կարգավորումներին, Ստամբուլի և

Լանզարոտեի կոնվենցիաների (Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին) վավերացմանն ուղղված վերջին զարգացումներին, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային նոր ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրի մշակման գործընթացին, «Իրավահավասարության ապահովման մասին» և «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքների նախագծերի իրավակարգավորումներին, ՀՀ նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ընդունմանն ուղղված ՀՀ կառավարության ջանքերին առնչվող հարցեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը 2019թ. սեպտեմբերի 26-ից 28-ը Փարիզում մասնակցել է Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի 25-ամյակի կապակցությամբ կազմակերպված «Իրավահավասարության արդյունավետ ճանապարհը» խորագրով բարձրաստիճան համաժողովին:

Համաժողովին մասնակցել են անդամ պետությունների կառավարությունների ներկայացուցիչներ, նախարարներ, բարձրաստիճան ներկայացուցիչներ միջազգային կազմակերպություններից և ECRI-ի անդամներ: Մասնակցել են նաև իրավահասարության հարցերով զբաղվող մարմինների ներկայացուցիչներ և փորձագետներ, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետությունների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

«Իրավահավասարության արդյունավետ ճանապարհը» խորագրով բարձրաստիճան համաժողովին ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը հանդես է եկել ելույթով: Իր ելույթում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը անդրադարձել է անցյալ տարվա քաղաքական փոփոխություններից հետո ձևավորված Կառավարության կողմից իրականացվող բարեփոխումներին՝ միտված ժողովրդավարական հաստատությունների կայացմանը, կառավարման թափանցիկության, բարեվարքության ու հաշվետվողականության ավելացմանը, կանանց և աղջիկների քաղաքական մասնակցության խրախուսմանը, բռնությունից ու ատելությունից ազատ հասարակություն կերտելուն: Իր խոսքում նախարարի տեղակալը նշել է, որ այս օրերին Արդարադատության նախարարությունը սկսել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները, ավելացնելով, որ քննարկումների փուլում են գտնվում

Իրավահավասարության ապահովման, Ազգային փոքրամասնությունների մասին օրենքների նախագծերը, Ստամբուլի կոնվենցիայի վավերացման գործընթացն ընթացքի մեջ է: Ք. Գրիգորյանը կարևորել է իրազեկման ու կրթության, մասնագիտական քննարկումների կազմակերպման շարունակական գործընթացը:

Նախարարի տեղակալն առաջնահերթություն է համարել կրթության տարբեր մակարդակներում հավասարությունը, խտրականության բացառումը, հարգանքն ու պատասխանատվությունն առավել ինտենսիվ ու մատչելի ձևով ինտեգրելու անադամ պետությունների մարտահրավերները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստիննե Գրիգորյանը ս.թ. սեպտեմբերի 24-ից 25-ը աշխատանքային այցով եղել է Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի պաշտոնյաների հետ աշխատանքային հանդիպումներ ունենալու նպատակով: Մասնավորապես, այցի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը հանդիպումներ է ունեցել ԵԽ Հակախտրականության տնօրինություն տնօրեն Ջերոեն Շոկկենբրոկի, Մարդկային արժանապատվության, հավասարության և կառավարման տնօրինություն տնօրեն Կլաուդիա Լուչիանի, Ժողովրդավարության հարցերով գլխավոր տնօրեն Սնեժանա Սամարջիչ-Մարկովիչի, ինչպես նաև Վենետիկի հանձնաժողովի նախագահ Ջիանի Բուքիքիոյի և Քարտուղարի տեղակալ Գրանդա Մենգինիի հետ: Քննարկումների ընթացքում կողմերն անդրադարձ են կատարել դատաիրավական բարեփոխումների վերջին զարգացումներին, դատական օրենսգրքի փոփոխությունների փաթեթին, որն ուղարկվել է Վենետիկի հանձնաժողովի կարծիքին, ՄԻՊ ազգային նոր ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. Գործողությունների ծրագրի մշակման գործընթացին, քրեական արդարադատության ոլորտի բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության ջանքերին, կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում իրականացվող բարեփոխումներին, երեխաների դեմ բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումներին, Ստամբուլի և Լանզարոտեի կոնվենցիաների վավերացմանն ուղղված վերջին զարգացումներին, «Իրավահավասարության ապահովման մասին» և «Ազգային փոքրամասնությունների մասին» օրենքների նախագծերի իրավակարգավորումներին:

Հանդիպումների ավարտին ԵԽ պաշտոնյաները ևս մեկ անգամ վերահաստատել են իրենց պատրաստակամությունը լիարժեքորեն սատարելու ՀՀ կառավարության ակտիվ ջանքերին, որոնք ուղղված են մարդու իրավունքների

պաշտպանությանը, օրենքի գերակայության ամրապնդմանը և կոռուպցիայի դեմ պայքարին:

ՀՀ արդարադատության
նախարարի տեղակալ՝

X _____

Քրիստիննե Գրիգորյան
30 սեպտեմբեր 2019թ.